




ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

Ե Ր Ե Վ Ա Ն

Իմ հուշերի մի աչքի մեջ տրդատակերտ չքնաղ Անին՝
Էրեբունի բլրին կանգնած՝ ես նայում եմ Երևանին,
Մի աչքովս ետ եմ նայում, մի աչքովս նայում առաջ՝
Կըշտում եմ նորն ու հինը՝ զույգ աչքերով կշեռք դառած,
Վեր ու վար եմ անում, սակայն, երկու թաթերն իմ կշեռքի,
Զույգն էլ քանզի իրենց վրա վաստակն ունեն հայոց ձեռքի:

Օ՛, չեմ կարող ես մի աչքով նայել ընկած հին հրաշքին,
Ում ավերակ մի տաճարն էլ հիացմունք է գոռոզ աչքին,
Նորի տված պատառ հացս թեկուզ լինի կաթեն էլ իմ մոր՝
Նորից հինը մորս կեսն է, մյուս կեսը ելնողն է նոր,
Ընկած մորից երես դարձնե՛մ, լավ է երես դարձնեմ կյանքից,
Լավ է թաղվեմ, քան թե մի կեղծ շշուկ ծնվի իմ շրթունքից:

Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունի,
Հին Անիս է վերածնվում բարրորի մեջ Երևանի,
Վեր կամարվում ժայռաբարրոր հազարագեղ գմբեթներով,
Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին նմանվելով,
Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ճոխ պալատների,
Սուրբ զանգերի դողանքի պես ծխորն է բյուր հայ մուրճերի:

Ելնում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,
Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտավոր նոր արձանով,
Վեր գմբեթվում հազարապյուն, հազարաձայն Երևանով: